

**Հայաստանի հետ Համաշխարհային բանկի խմբի ԵԳՌ ներքո նախանշվող գերակա հարցերի
շարքում առաջնորդողը աշխատատեղերի ստեղծումն է**

Համաշխարհային բանկի խմբի կողմից Հայաստանի Հանրապետության կառավարության, երկրի քաղաքացիական հասարակության դերակատարների հետ սերտ համագործակցության միջոցով մշակված Երկրի գործընկերության ռազմավարությամբ (ԵԳՌ) մասնավոր հատվածի կողմից աշխատատեղերի ստեղծումը համարվում է աշխատանքների առանցքային ուղղություններից մեկը:

Հայաստանի զարգացման ռազմավարությամբ որպես երկրում կենսամակարդակի բարելավման ու աղքատության կրճատման հիմնական շարժիչ ուժ, առանձնացվում է աշխատանքով ապահովելու հնարավորությունների մեծացումը: Կառավարությունը շեշտադրում է մարդկային կապիտալի զարգացման, սոցիալական պաշտպանության մեծացման ու հանրային վարչարարման ու կառավարման արդիականացումը:

Կառավարությունը նաև պարտավորվել է մինչև 2025թ. եռապատկել մեկ շնչին ընկնող եկամուտները (հասցնել 10.000 ԱՄՆ դոլար) ու կրճատել աղքատությունը՝ ներկայիս 35 տոկոսի փոխարեն այն հասցնելով 13 տոկոսի: Արդյունքում աղքատությունը կհաղթահարեն Հայաստանի 800.000 բնակիչներ: Բանկը, որն իր առաջ երկուստեք նպատակ է դրել մինչև 2030թ. վերացնել ծայրահեղ աղքատությունը և զարկ տալ համընդհանուր բարեկեցությանը, կօժանդակի արագացված տնտեսական աճի ճանապարհով աշխատատեղերի ստեղծմանը միտված աշխատանքներին Հայաստանում:

ԵԳՌ-ը, որ պատրաստվել է Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ) հետ համատեղ, ներկայացնում է այն աշխատանքները, որոնց համադրված ազդեցության արդյունքում նոր թափ կստանան ու ավելի մեծ ծավալների կհասնեն Հայաստանի զարգացմանն ուղղված մասնավոր ռեսուրսները:

Ռազմավարությունը կառուցված է երեք առանցքային ուղղությունների շուրջ.

- **Օժանդակություն ուղղված մրցունակությանն ու աշխատատեղերի ստեղծմանը.** ԵԳՌ ներքո օժանդակությունն ուղղված կլինի փոքր ու միջին ձեռնարկությունների ստեղծման, աճի ու այդ ոլորտում նորարարությունների համար անհրաժեշտ գործարար ու ներդրումային միջավայրի բարելավմանը, գյուղատնտեսության ու գյուղացիական տնտեսության ինքնաբավ զարգացմանը և տնտեսական ենթակառուցվածքների, մասնավորապես՝ տրանսպորտի, էլեկտրաէներգիայի, ջրմատակարարման ու ջրահեռացման հասանելիության ու որակի բարելավմանը: Պլանավորվում են նաև քայլեր ուղղված տուրիզմի զարգացումը խթանելուն, մարզային զարգացման ու մշակութային ժառանգության ուղղությամբ կապիտալ ներդրումներ կատարելուն՝ որպես տնտեսական բազմազանեցման ու աճի շարժիչ ուժ հանդիսացող ոլորտներ, ինչպես նաև քայլեր ուղղված վարկերի հասանելիության խոչընդոտները վերացնելուն:
- **Սոցիալական ծառայությունների մատուցման արդյունավետության ու արդարացիության բարելավում.** ԵԳՌ ուշադրության կենտրոնում է մարդկային ներուժը, որի հետ կապված նախատեսվում են հասցեական միջամտություններ առողջապահության ոլորտում՝ առողջության

առաջնային պահպանման ոլորտի հետագա զարգացման, ֆինանսավորման բարելավման, ինստիտուցիոնալ կարողությունների, ինչպես նաև հիվանդանոցային ցանցի արդիականացման միջոցով: Կրթության ոլորտում նախատեսվում են աշխատանքներ նոր կրթական բովանդակության մշակման ու ներդրման, ուսուցիչների վերապատրաստման ու գնահատման, ֆինանսավորման մեխանիզմների ու դպրոցների ինքնավարության ամրապնդման ուղղությամբ: Ուղղություններից մյուսը սոցիալական պաշտպանության հասցեականության բարելավումն է: Բանկի կողմից ակնկալվող հիմնական արդյունքներից են սոցիալական ապահովության բարելավմանն ուղղված սոցիալական ենթակառուցվածքների վերականգնումն ու ստեղծումը, առողջապահական արդյունքի բարելավումը, մասնավորապես՝ հիվանդացության ու մահացության ցուցանիշների մասով, և ընտանեկան նպաստի ծրագրում ներառվածների համար առողջապահական ծառայությունների մասով արտոնությունների ապահովումը:

- ***Կառավարման ու հանրային ծառայությունների ոլորտում հակակոռուպցիոն միջոցների բարելավում.*** Աշխատանքների ուղղվածությունը կլինի կառավարության հակակոռուպցիոն գործողությունների վերանայումը, հանրային վարչարարության արդյունավետության բարելավումը և պետական ֆինանսների կառավարման ոլորտի բարեփոխումների խորացումը՝ կառավարության գործունեության վերաբերյալ տեղեկատվության հասանելիության բարելավման և հակակոռուպցիոն աշխատանքներում ներգրավված հիմնական կառույցների ամրապնդման միջոցով: Գործողությունների շարքում նախատեսվում են ծառայությունների մատուցման էլեկտրոնային եղանակների ապահովում տարբեր կառույցներում և պետական հաստատությունների ֆինանսական վերահսկողության ու աուդիտի մեխանիզմների բարելավում: